


կերութեան բոլոր մթերանոցներէն օրական 16000 օրինակ հերապարակուի: Այս բոլոր Աստուածաշունչները և Պատկարանները կը ղրկուին աշխարհի ամէն կողմը: Գրքերը ցրուելու համար, ընկերութիւնը իւր ծախքով արտասահմանի միսիոնարական հաստատութիւններուն կը ղրկէ. փոխարէն միսիոնարները կեդրոնին կը յանձնեն ինչ որ գոյացած է իրենց ծախած գրքերէն, աստին անդին ղրկուելու ծախքերը ղեղչելէ վերջը: Տպագրութեան և ընծախրին մէկ փոքր մասը միայն կը հայթայթուի այս կերպով: Ընկերութիւնը, սակայն, միշտ կընդարձակէ իր գործը, և որչափ մեծ կորուստ կրէ, այնչափ ուրախ է, որովհետեւ ատիկա կը նշանակէ թէ Աստուածաշունչը աւելի տարածուել սկսած է աղքատ ժողովուրդներու մէջ: Ընկերութիւնը աշխարհի ամէն կողմը գործակալներ, շրջիկ դրավաճառներ, կին—վաճառողներ ունի: Ասոնք միսիոնար չեն, քարոզելու իրաւունք չունին. իրենց պարտականութիւնն է ս. Գիրք ծախել, և այս նպատակով աշխարհի ամէն կողմը կը թափառին: Թէև Աստուածաշունչի Ընկերութիւնը 180,000,000 Աստուածաշունչ ցրուած է, բայց ասոնք աշխարհի ընահչութեան միայն $7\frac{1}{10}$ մասին խօսած լեզուներով հրատարակուած են. հետեւեալը, տակաւին $5\frac{1}{10}$ -ին, այսինքն 450 միլիոն ընակիչներու ալ հասկնալի ընելու է ս. Գիրքը: Ասոնց լեզուով բնա մը թարգմանուած չէ Աստուածաշունչէն:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Ապրիլի համարում յայտնեցինք, որ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը բարեհաճել էր իւր կողմից ներկայացուցիչ նշանակել Կիլիկիոյ կաթողիկոսի ս. Օծման Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ եպս. Պալեանին:

Ամսոյս 15-ին Ամեն. Պատրիարքը հեռագրով յայտնեց, որ Տրդատ սրբազանը հիւանդութեան պատճառաւ հրաժարուել է Կիլիկիա գնալուց. Նորին Սրբութիւնը եր-

կրորդ հեռագրով հրամայեց Գեր. Հմայեակ եպս. Դիմաքսեանին, որ Կ. Պոլսումն է՝ ստանձնել ներկայացուցչի պաշտօնը. սակայն ժամանակի սղութեան պատճառաւ նա չէր կարողացել ուղևորուել, ուստի Վեհ. Հայրապետը բարեհաճեց հետևեալ հեռագիրը տալ.

Ս Ի Ս

Սահակ Կաթուղիկոսին

Շնորհաւորեմք զս. Օծումն Ձեր յԱթոռ Տանն Կիլիկիոյ. հայցեմք զօժանդակութիւն շնորհաց ս. Հոգւոյն ի զօրավիդ Ձեզ՝ ի թեթեացումն ծանու պարտուցդ: Ծաղկեսցի Քե Աթոռդ անշքացեալ և բերկրեսցի ժողովուրդն մխլթարեալ:

Մկրտիչ Կաթուղիկոս

Ամենայն Հայոց.

19 Ապրիլի 1903

Ս. Էջմիածին:

Ի պատասխան ստացուեց այս հեռագիրը.

Էջմիածին

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅ ՕԾՈՒԹԵԱՆ

Տ. Տ. Մկրտչի Ա. Կաթուղիկոսի ամենայն Հայոց.

Խնդակցութիւն Ձեր քահանայապետական համակէ ուրախութեամբ զիս և զԿիլիկեայս. վերառաքեմք միաբան զաղօթս ի ժամ՝ օրհնութեան սրբալոյս իւղոյն յաղագս քաջողութեան Սրբութեան Ձերոյ և բարդաւաճման Մեծի Աթոռոյդ Սրբոյ Էջմիածնի.

Կաթուղիկոս Կիլիկիոյ Սահակ.